դուրս է պրծում եւ շուարած, նոր վտանգի առջեւ, յետ վազում:

Մի ինչ որ բան, լպրծուն, կպչում է մարմնին, ինչպէս թաց ջրիմուռը ջուրը ընկած առարկային:

Օրը անսլաք ժամացոյցի է նմանում: Դաշտավայրը չարժապատկերի ժապաւէնի, որ այրուելու վտանգի մէջ է:

Գնում եմ վար պառկելու: Ամէնքը պառկած են, եւ ոչ ոք քուն չունի:

Ժամը 6-ին, վերջապէս մեկնում ենք:

* * *

Ցաճախ ինքս ինձ եմ հանդիպում:

Քանի՜ անգամներ...

Ցիշում եմ մի օր — դիշեր էր — դուրս եկայ սենեակից, չնայած մաղուն անձրեւին, եւ աննպատակ, Բրիւսելի փողոցները ընկայ: Իսպանիից մեղմօրէն վայր իջնող լայն մի փողոց, թրջած ոտնաձայնս հնչեցնում էր դատարկութեան մէջ: Սակաւաթիւ մարդիկ էին անցնում: Կային վայրկեաններ, երբ ոչ ոք չկար: Կաֆէները եւ խանութները փակ էին: Վառուած, բարձր պատուհաններից նարնջագոյն թռչուններ էին սահում խոնաւ մութի մէջ: Վերջին մի տրամվէյ, այրուող տնակի նման, ադմուկով սահեց, եւ անձրեւը զօղանջեց երեք անգամ:

Ինչպէս բոլոր մեծ քաղաքներում, դիշերը ուշ, պատերի տակից տարօրինակ էակներ էին անցնում, շուարած, չորս կողմը նայելով:

Լուսաւորուած մի տան բակից, մի խումբ երիտասարդներ դուրս եկան, կանայք եւ տղամարդիկ, եւ բարձր ծիծաղելով անցան:

Քայլս արագացրի: Ինչո՞ւ, ես էլ չէի իմանում: Մի տարօրինակ անձկութիւն ուսերիս վրայ ճնշիչ մի ծանրութիւն էր դրել: Պարապ էի մաքուր թղթի նման, որի վրայ քար են դրել, որպէսզի քամին չփախցնի:

Մի խանութի առջեւից անցայ: Փակ էր: Դրան ապակիի ետեւից աննշան առարկաներ էին երեւում: Կանդ առի: Մեքենաբար կանգ առի: Ուրուականի պէս մէկը նայում էր ինձ: Ձեռքերը երկար վերարկուի գրպանների մէջ, օձիքը վեր հանած, լայն գլխարկ եւ տենդոտ, հեռասնդող աչքեր:

Շուտ անցայ, պատահական տեսիլքի կիզիչ ոյս կայծը հետս տանելով: Նախ չմտածեցի, բայց մի քանի քայլ անելուց յետոյ ինձ թուաց, որ այս մարդը, այս նայուածքը ինձ ծանօթ էր: Ցետ վերադարձայ, նորից նայեցի խանութից ներս՝ ոչինչ:

Անձկութիւնը այլեւս ձեռքերիցս բռնեց, ծունկերիս հարուածներ տուաւ, քայլերս քաշքշեց:

Այսպէս անցայ մի քանի փողոց: Անկիւնների դարձքին վախենում էի: Վախում էի անսպասելի հանդիպումից:

Ո՞ւմ հետ: Ո՞ւմ հետ...

Բուլվար Անսպախի մօտերը մի ծառայ, կաֆէի առջեւը աւլում էր եւ ձեռքերովը նշան էր անում մի ուրիշ անցորդի: Կանգ առի եւ ես: Ոչինչ չկար: Այդ խորհրդաւոր նշանները ինչո՞ւ համար էին: Աւելը ձեռքին մարդը նայում էր, ծիծաղում էր, աչքերը տնկած մայթի միւս կողմը: Մէկ էլ տեսնեմ՝ նա՛: Նա, այն մարդը, որ ինձ երեւցաւ ապակիի մէջ: Գնում էր մինակ, ուսերը մի քիչ շարժելով: Զղային, դրեթէ աննշմար շարժումներով: Ձեռքերը երկար վերարկուի գրպանում, օձիքը վեր հանած, լայն գլխարկ եւ այն, նոյն այն նայուածքը:

Ետեւից ընկայ: Փողոցից փողոց, ծանրաբեռնուած ծունկերի տակ քաշքշելով ոտքերս:

Երբեմն նա իր քայլերը դանդաղեցնում էր, աղօտ լապտերի տակ կանգ առնում, մի բուռ լոյս ժողովում աչքերի մէջ եւ նորից առաջանում:

Հասանք «Մեծ Հրապարակ», ամենախորհրդաւոր միջնադարը, կօրպորասիօնների ոսկեզօծուած տուներով, քաղաքապետութիւնով եւ թագաւորական փոքրիկ անրնակ պալատով: Կանգ առաւ եւ նայեց: Վաղից մի քիչ վար, ողնաշարի մօտ, սարսուռների ալիքներ էին անցնում: Զգում էի, որ զսպում է իրեն: Մեքենաբար զգում էի, որ նոյն տեղը, ես նոյն սարսուռն եմ զգում: Ետ դարձաւ եւ, ինչպէս անում են կոյր մարդիկ, մօտեցաւ ոսկեզօծուած տուներին եւ պատերը շօշափելով որոնեց: Հրապարակի շուրջը դառնալուց յետոյ, կանգ էր առնում ամէն մի դրան մօտ. թագաւորական պալատի սանդուխներով բարձրացաւ:

Վաղեցի ետեւից: Սանդուխների վրայ ոտքս սահեց, վայր ընկայ: Աչ ծունկիս վրայ

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան